

28. ՂՈՉԱՂ ՄԻՐՁԱՆ

Մի թաքավոր ուներ իրեք տղա, իրեք աղջիկ:

Մեռնելու վախտը տղերքանցը ասաց.— Ձեր քվորտանցը ով որ ուզի՝ տվե՛ք, կուղի գել ըլնի, կուղի արջ. մի խոսքով, ով որ գա՛ ավե՛ք, միք թողնի, որ տանը թթվեն, պառավեն:

Քաքավորը մեռավ ու իրա երկիրը իրա իրեք տղերանցը թողեց:

Անց կացավ մի քանի վախտ, մի օր մի Գել էկավ ու ուղում էր պսակվել ևս թաքավորի աղջկերանցից մեկի վրա: Համա մեծ ու միջնեկ աղբերտինքը չէին տալիս. պուճուր աղբերը ուզեց իրա հոր խոսքին լսի ու աղջկերանցից մինին նրա վրա պսակեց: Գելը տռավ իրա կնիկը ու հեռացավ իրա երկիրը:

Մեկել օրը Արջը էկավ, էլի մեծ ու միջնեկ աղբերտինքը չէին ուղում, համա պուճուր աղբերը նրանց լլսեց ու իրա քվորտանցից մեկին տվեց նրան: Սա էլ իրա կնիկը առավ ու գնաց իրա երկիրը:

Արջը հեռացավ թև չէ, մեկ էլ տեսնես Արծիվն էկավ ու աղբորտանցից կնիկ էր ուղում: Մեծ ու միջնեկ աղբերտինքը չուզեցին տալ, համա պուճուրը Արծիվին ղարտակ ետ շգարձրեց, շունքի իրանց հերը մեռնելիս էսպես էր ասել:

Քաջավորի տղերքանց պսակվելու վախտն էկավ: Գյուրզը
բացեցին. ում դռան մոտ ընկնեի գյուրզը՝ նրա աղջիկն էր իրա դըս-
մաթը: Մեծ աղբոր գյուրզը ընկավ մի կտուր, միջնակինը՝ մեկկելի,
համա պուճուրի գյուրզը ընկավ մի տլի մեջ, որտեղ գորտերը կըռ-
կըռոցով մարդի ականջ խլացնում էին: Ի՞նչ անեի, էս էր նրա
զամաթը, մի գորտ վե կալավ տարավ տուն:

Ամեն իրիկուն հենց որ տուն էր գալիս, տեսնում էր ամեն բան
ռարբին-կարբին դրած ա. տունը ջրջրհանած, ավլած, խալիչեքը
զցած, կժերը լցրած, կերակուրը էփած, համա տանը ոչով չկար:

Մի օր սա դրսևը դարավուլ քաշեց. տեսավ, որ գորտի միջից
մի հուրի-փարի աղջիկ դուս էկավ, ջրջրհանեց, ավլեց, խալիչեքը
զցեց, կերակուրը էփեց, ինքն էլ մի քանի թիքա կերավ ու ուզում
էր, որ էլի նի մտնի իրա տեղը՝ էն դ՛հից Միրզան՝ վրա հասավ ու
լթողեց: Խեղճ աղջիկը մնաց կարմրած:

էն վախտը սկսեց աղջիկը խոսել Միրզու հետ.

— Մեր ցեղը էն տեսակ ա, որ շենք կարա արև տենա. Սև
դևը մեզ կբռնի, կտանի:

Միրզան ասաց.— Բաս ես մեռե՞լ եմ, որ Սև դևը կարենա քեզ
տանի. մի թուր ա՛ նրա ջանը, իսկի դու դարդ մի անի, քու մազին
ոչով չի կարա ձեռ տա:

Մի անգամ հարսների հետ դռան ջեմքի վրա զրից էին անում,
Սև դևը վեր էկավ երկնքից ու մազերը ձեռին փաթաթելով տարավ:
Խեղճ Միրզի լեղին շուր կտրեց, երբ էկավ տուն ու տեսավ, որ իրա
կնիկը էլ չկա:

Միրզան իրան-իրան ասաց. «Ով ա տարել, ով չի տարել, Սև
դևն ա տարել»: էն սհաթին վեր կացավ, թուր-թվանք կապեց, ձին
նի էլավ ու «Յա՛ տեր աստոծ» կանչելով ճամփա ընկավ: Շատն ու
քիչը աստոծ գիդա, նա մի գեղ հասավ: էս դեզում կենում էր Գելը
իրա կնկա հետ: Միրզան էկավ Գելի տանը վեր էկավ: Նա իրա
քվորը ճանաչեց, իրար փաթթվեցին ու ջատ լաց էլան: Քիրը նրան
մի տեղ թաք կացրեց, որ Գելը իրիկունը չգա, ուտի նրան:

Գելը էկավ տուն ու մոթմոթալով ասաց.— Ա՛յ կին, մարդ-
մարդահոտ ա գալի:

1 Ձեռագրում փակագծի մեջ նշված է՝ աղի անունը էսպես էր, որը բանա-
սացի խոսքերն են (Մ. Կ.):

Կնիկն ասեց.— Ա՛յ մարդ, մարդ-մարդահոտ քեզանից ա գա-
լի, սարից-ձորից դու ես դալիս:

— Չէ՛, որ չէ՛, սակա մարդ կա:— Կնիկը խոստովանեց, թե
իրա աղբերն տ:

— Թե մեծ կամ միջնեկ աղբերտինքդ են՝ մեծ թիքեն ականջը
կթողնեմ, համա թե որ պուճուր աղբերն ա, իմ դլխի վրա էլ տեղ
ունի, բարով աստու բարին ա էկել:

Կնիկը ասեց, որ պուճուրն ա: Էն վախտը կնկա վրեն բարկա-
ցավ ու ասեց, թե.

— 'Ինա՛, կանչի:

Միրզան էկավ: Գևը իրա կաշվից դուս էկավ ու դառավ մի
սիրուն ջահել տղամարդ: Իրար փաթթվեցին ու պաշպչեցին մեկ-
մեկու: Միրզան ու Գևը նստեցին իրար մոտ ու սկսեցին զրից
անել:

Գևը ասեց.— Էրեկ ես տեհա Սե դեը մի սիրուն աղջկա մա-
ղերը ձեռներին փաթաթած վերե էր տանում. խելքս ու միտքս էն
սիրուն աղջիկը տարավ:

Միրզան ասեց.— Սա էլ հենց նրա հավարին եմ էկել. նա իմ
կնիկն էր:

Գևը ասեց.— Սե դեը ընում ա Սե սարի գլխին: Էն սարի վրա
մի եղ կա, ևզի փորին մի աղվես կա, աղվեսի փորին մի ղութիկ
կա, ղութիկի մեջ իրեք ծիտ կա: Թե որ էդ ծտերին մորթես՝ Սե դեի
հոգին էն ա: Շոք վախտերին էն եզր դնում ա, մի մեծ գյուլ կա,
լնտեղ ջուր խմելու: Դու էն գյուլը դինի ու արաղ ածա, եզը կխմի
ձարալությունից ու դու նրան հեշտաթյամբ կարաս սպանել:

Էդպես նա դնաց, արեց: Եղին մորթեց, փորից աղվեսին հա-
նեց, աղվեսի փորից հանեց ղութիկը, ղութիկի մեջ գտավ իրեք ծիտ:
Էն բողկին մինի ճիտը քաշեց՝ Սե դեը ուշքից դնաց, մեկելի ճիտն
լլ քաշեց՝ Սե դեը շշմած վեր ընկավ: Էն մեկելն էլ ձեռին դնաց
Սե դեի մոտ. նա ցատ աղաչեց, որ էդ մեկի ճիտը չքաշի, համա
նա շխնայեց ու քաշեց նրա ճիտը: Էն բոպեին սատկեց դեը¹:

Վերցրեց նա իրա կնկանը ու տուն էկավ ու երկար վախտ
իրար հէս ուրտիս ապրում էին:

¹ Ձեռագրում եղել է՝ եզր, հավանաբար բանահավաքի վրիպումն է (Մ. Կ.):

